№ 89 Մայիսի 29 (Յունիսի 10) **1880** Մայիսի 29 (Յունիսի 10) № 89

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլ: Առանձին համարները 5 կոպէկով:

—

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

—

Օտարաքաղաքացիք գիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

—

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով

—

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անձնապաշտպանութիւն:—Ներքին տեսութիւն: Հայոց թատրոն: Նամակ Սղնախից: Նամակ Նուխուց: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Լուսինեանք:—Յայտարարութիւններ:

ԱՆՁՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

—

Շատ բաներում մեր ամբոխը, ենթարկվելով դարևոր նախապաշարմունքներին, յանցանք է համարում անձնապաշտպանութեան զգացմունքը:

Օրինակ մի հիւանդութիւն, ծաղիկ է յայտնվում մի հայ ընտանիքում,—և հայ ամբոխը մեղք է համարում մաքառել այդ հիւանդութեան դէմ, դիմել բժշկական օգնութեան, որովհետև նրա հասկացողութեամբ այդ հիւանդութիւնը Աստուած է ուղարկել մարդկային ցեղի մեղքերի համար.... Ամէն մի ցաւ, ամէն մի հիւանդութիւն իր հրեշտակն ունի, կարծում է մեր տգէտ ամբոխը, բժշկել մարդուն ցաւից, օրինակ բժշկել ուզենալ մանուկին ծաղիկ առած հիւանդութենից, հայի կարծիքով մահացու մեղք է Աստուծու դէմ, այլ պէտք է հիւանդութեան հրեշտակին դուրեկան լինել, նրան հաճելի լինել, որ հրեշտակի գութը շարժվի և նա ազատի երեխային նրան սպառնող մահից....

Որքան այդ տեսակ նախապաշարմունք կորստաբեր է, ինքնիրան հասկանալի է:

Բերենք այժմ մի ուրիշ օրինակ:

Գիւղացու դաշտերի վրա երևում է մորեխ, որ սպառնում է ոչնչացնել երկրի ամբողջ հունձքը և գցել գիւղացուն վերջին աղքատութեան մէջ.... Գիւղացուն բսպառնում է թանգութիւն, աղքատութիւն, գուցէ և սով...Բայց գիւղացին և այս դէպքում անձնապաշտպանութիւնը մահացու մեղք կը համարի: Դուրս գալ դաշտ և միացած ուժերով աշխատել ոչնչացնել վնասակար միջատը, գիւղացին երբէք չի համաձայնի: Նա հաւատացած է, որ մորեխը երկնային պատիժ է, որ Աստուած ուղարկել է մեզ մեր մեղքերի համար, ուրեմն ջանալ ոչնչացնել մորեխը, նշանակում է ընդդիմանալ Աստուծու կամքին, որ ի հարկէ ապարդիւն գործ է:

Այդպիսով մեր ամբոխի մէջ տիրապետող խոր նախապաշարմունքը արգելք է լինում մեծ մասամբ հայի մէջ անձնապաշտպանութեան զգացմունքի զարգանալուն, արգելք է լինում նրա մէջ ամէն առաջադիմութեան և ուրեմն նպաստում է անշարժութեանը....

Հրէշաւոր նախապաշարմունքը այնտեղ է հասնում հայ ամբոխի մէջ, որ նա հնարելով զանազան առասպելներ, ինքն սկսում է հաւատալ այդ առասպելներին: Հայ ժողովրդի մէջ սաստիկ տարածվում է այն համոզմունքը, որ մորեխի թևերի վրա գրված է եբրայերէն լեզուով «Աստուծու պատիժ» խօսքը, ուրեմն կռւել այդ միջատի դէմ, ոչնչացնել ուզենալ նրան, նշանակում է մեղանչել Աստուծու կամքի դէմ, նշանակում է սրբապղծութիւն գործել....

Եթէ այդպէս շարունակի մեր ամբոխը, մանաւանդ առաջնորդված լինելով մեր տգէտ հոգևորականների ձեռքով, մենք շատ հեշտ կարող ենք քրիստոնէութենից կրկին ընկնել կռապաշտութեան մէջ, հասնել եգիպտական կրօնի հրէշաւորութեանը, որ սուրբ էր համարում և Աստուծու տեղ էր պաշտում ամէն տեսակ վնասակար և վտանգաւոր կենդանիներին, կրոկոդիլներին, թունաւոր օձերին, և այլն....

Բայց բաղդաւորապէս այս տարի մի փոփոխութիւն է նշմարվում մեր Անդրկովկասի թէ հայոց և թէ վրաց գիւղական ազգաբնակութեան բարոյական տրամադրութեան մէջ: Այս տարի մեր գիւղական ամբոխը, կարծես, սկսում է հրաժարվել իր դարևոր վնասակար նախապաշարմունքից, սկսում է ըմբռնել անձնապաշտպանութեան զգացմունքի պարտաւորութիւնը:

Մեր աչքի առաջև կատարվում է մի ուրախալի երևոյթ. մեր գիւղացին սրբապղծութիւն չէ համարում ոչնչացնել իր արտերի, իր հունձքի, իր օրեկան ապրուստի թշնամի, վնասակար միջատը, և մենք տեսնում ենք որ ամէն տեղ մեր գիւղացիները ամենայն եռանդով ջանում են ոչնչացնել մորեխը:

Չենք կարող չուրախանալ, երբ տեսնում ենք ժողովրդի մէջ անձնապաշտպանութեան զգացմունքի արթնանալը. դա միշտ լինում է բարոյական և մտաւոր առաջադիմութեան նշան ամբոխի մէջ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

—

Հինգշաբթի, մայիսի 15-ին, հայ դերասանական մշտական խումբը ներկայացրեց, կրկին անգամ, յօգուտ դերասան պ. Սուքիասեանցի Մօլիէրի «Դօն-Ժուան» հեղինակութիւնը: Ներկայ գտնվելով յիշեալ ներկայացման՝ ես, գործը վերջանալուց, մտաբերեցի Պարսից երևելի բանաստեղծ Սաադիի մէկ խորամիտ կատակը, որի հետ աւելորդ չեմ համարում ծանօթացնել «Մշակի» ընթերցողներին: Սաադին մէկ անգամ անցնելով աղիւսագործի (քարփիչ կտրող) մօտով՝ լսում է որ նա մեծ զգացմունքով երգում է իրան բանաստեղծութիւններից մէկը: Այդ հանգամանքը բաւականին հետաքրքրում է պօէտին և նա կանգնում է լսել աղիւսագործի երգը՝ այն նպատակով, որ իմանայ թէ օտարականները արդեօք ինչպէս են ձևակերպում իր բանաստեղծութիւնները: Քանի րոպէ սպասելուց յետոյ՝ Սաադին նկատում է որ երգիչը չափազանց կերպով աղճատում է իր գեղեցիկ աշխատանքը: Բարկանալով մտքի մէջ սուտ երգչի անհմտութեան և չը գտնելով ուրիշ ճանապարհ աղիւսագործին պատժելու, պարսից պօէտը սկսում է բաւականին հանգարտ կերպով ոտնակոխ անել նրա պատրաստած աղիւսները: Աղիւսագործը տեսնելով անծանօթի լրբութիւնը՝ յարձակվում է նրա վրա ջարդելու նպատակով: Պօէտը հանգստացնելով աղիւսագործ—երգչին հասկացնում է նրան, որ նրա բարկութիւնը ամենեւին անտեղի է, որովհետև ինքը—Սաադին վարվում է աղիւսագործի աշխատանքի հետ այնպէս՝ ինչպէս նա—իրան պօէզիայի հետ:

Ցանկալի է իմանալ՝ ի՞նչպէս կը վարվէր արդեօք ողորմած հոգի Մօլիէրը պ. Սուքիասեանցի հետ, եթէ լսէր այս վերջինի խաղը «Դօն-Ժուանի» պաշտօնում: Պ. Սուքիասեանց չը տիրապետելով ոչ մէկը այն յատկութիւններից, որոնք պատկանում են յիշեալ պաշտօնին, աւելի վատ ոտնակոխ առաւ անմահ Մօլիէրի գեղեցիկ աշխ[...] տանքը, քան թէ աղիւսագործը: Նրա խօսակցութիւնը, ոչ շարժողութիւնը և ինչ և իցէ դերասանական մաներաները չ[...] համապատասխանում, թէկուզ վերջի առ[...] ճանում, այն պաշտօնին, որը նա ունեցե[...] համարձակութիւն (ներեցէք անկեղծութեա[...] ընդունել իր վրա: Նրա ուշը մեծ մաս[...] շրջվում էր դէպի հասարակութիւնը, որս[...] ղից, երևում էր, ինչ և իցէ նիւթապաշտ[...] շատ էր հետաքրքրում նրան՝ քան թէ [...] խաղը: Դա քիչ է. մինչև անգամ նա, [...] նայած որ երկրորդ անգամն է խաղում կ[...] միջոցում և, մանաւանդ, որ բենեֆիցիան[...] մինչև անգամ դերն էլ չը գիտէր, այնս[...] ինչպէս պահանջում է պարտքը. նայեա[...] շրջելով դէպի յուշարարը, նա նրա[...] էր երբեմն պահանջում օգնութիւն: Խ[...] Մօլիէր! Եւ այդպիսի դերասանը երեկ[...] օրը ստացաւ հասարակութենից չորս հ[...] թանգագին ընծաներ: Թէև ես շատ կարծ[...] քաւոր եմ յիշեալ ընծաների ուղիղ նշա[...] կութեան մասին, որոնք չար լեզուների ա[...] լով, այսօր պիտի յետ դառնան մի և [...] մագայիս, որտեղից փոխ առաւած են, [...] այդպիսի հանգամանքը թեթևութիւն [...] այն մարդկանց սրտին, որոնք ցաւում են [...] հասարակութեան արարմանցը—որ նա կ[...] գին չէ գնահատում դերասանութեան նկա[...] տաղանդը: Ասէք, խնդրեմ, ինչ է նշա[...] կում վարձատրել պ. Սուքիասեանցի տաղան[...] չորս ոսկեգործ ընծայով, բայց պ. Տէր-Դ[...] թեանցի պէս կօմիկ—դերասանին վարձատ[...] լօկ ծափահարութեամբ: Մի՞թէ դա [...] քաղաքավարութիւն չէ հասարակութե[...] կողմից: Երկուսից մէկը. կամ անքաղաքավ[...] րութիւն է կամ պարզ անհասկացողութ[...] դերասանական գործի: Բոլորովին ջոկ բան [...] պ. Մանդինեանցը Լէպօրէլլօյի (Դօն-Ժուա[...] ծառայ) դերում. Նրա գեղեցիկ խաղն [...] միայն, որ պաշտպանեց Մօլիէրի աշխատան[...] նրա հիանալի կօմիկական արտայայտութիւ[...] ներն էին միայն, որ կարողացան պատրուա[...] պ. Սուքիասեանցի պակասութիւնները:

Այս անգամ օրիորդ Սիրանոյշն լաւ [...] սովորած իր րօլը: Բայց ինչ կը վերաբե[...] օր. Աստղիկին՝ նա ըստ իր սովորութե[...] բաւական լաւ էր պատրաստուած: Երկու[...] խաղն էլ կարելի է համարել բաւականաց[...] ցիչ, աւել ոչ: Մնացեալ դերասանների մա[...] աւելորդ եմ համարում խօսել:

Երկու խօսք էլ տիկին Փաշայեան-Տէր-Գ[...] գորեանցի մասին: Այդ տիկինը, որը «Տօտ[...] փօղովիլում Տօտօի դերը կատարեց, [...] նի իրաւունք տաղանդաւոր կոչվել. դ[...] մաներաները ու խօսակցութեան ձևակերպ[...] թիւնները խաղի ժամանակ, ցոյց տալով բ[...] նական շնորք, հաստատ կերպիւ խոստանու[...] են սահեծել դրանից լաւ դերասանուհի, ե[...] ինքը չը րհամարհէ այդ պրօֆէսիան: Հա[...] րակութիւնը դրան էլ վարձատրեց, բացի [...] կոր ծափահարութենից, թանկագին ընծ[...] յով, որի դէմ ոչինչ չունեմ ասելու, բա[...] չոր շնորհակալութենից դէպի այն պարգե[...] տուն, որը գնահատեց տիկինի տաղանդը: Վ[...] չէր լինի, եթէ ամենայն դերասանական տ[...] ղանդ այդ կերպով գնահատվէր....

Տ. Կ.

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՑ

23 ապրիլի

Ամսոյս 22-ին տեղւոյս մի քանի հայ երիտասարդներ հաւաքված լինելով մէկի տանը հացկերոյթ ունէին, ուր հրաւիրած էի և ես։ Ըստ սովորութեան կատարում էին զատկական ուրախութիւններ։ Այս ուրախութեան ժամին աչքի առաջ երելով Վասպուրական հայերի սրտաճմլիկ դրութիւնը, մի քանի խօսքով նկարագրեցի սովեալների աւալի վիճակը, որով հրաւիրեցի երիտասարդներին գնութեան ձեռք մեկնելու այս ազգօգուտ գործին։ Շնորհակալ եմ՝ ամենքն էլ սրտի ուրախութեամբ դրանց կարողութեան չափ նուիրեցին։ Հաւաքած իրերը ուղարկելով խմբագրութեանդ խնդրեմ տեղի շնորհել ձեր պատուական լրագրի մէջ ի գիտութիւն նոցա և համայն ազգի։ Ահա նուիրատուների ցուցակը։ Եղիշէ քահանայ Տէր-Աստուածատրեանց 1 ռուբլի, Լազր Գօճեանց 3 ր., Սէրգօ Գօճեանց 1 ր., Նիկողայոս Օնանեանց 1 ր., Յովհաննէս Սափարեանց 1 ր., Նիկողայոս Սափարեանց 1 ր., Նիկողայոս Յովակիմեանց 2 ր., Արշակ Յովակիմեանց 2 ր., Բէգլար Ղարաբէգեանց 1 ր., Նիկողայոս Սերեբրակեանց 1 ր., Սմբատ Ղարագօզեանց 1 ր։ Գումարն է 15 ր։

Եղիշէ քահ. Տէր-Աստուածատրեանց

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

11 ապրիլի

Երբ լրագիրներում կարդացինք Վանայ մեր սովատանջ հայ եղբայրների յուսահատ դրութեան նկարագրութիւնը և յուզված հոգով պատմեցինք բոլորը մեր աշակերտակից ընկերներին և ընկերուհիներին՝ յայտնելով նրանց որ մեր հասակակից վանեցի եղբայրներին և քոյրերին սովի դէմ օգնելու պարտաւորութիւնը մերն է, նրանցից ամենափոքրերն անգամ ամենայն պատրաստակամութեամբ յանձնեցին մեզ իրանց լումաները, որից գոյացաւ տասն երեք (13) ռուբլի։ Նուիրատուների ցուցակի հետ ուղարկելով խմբագրութեանդ, խնդրեմք հասցնել այդ գումարը Վան, նուիրողների անունները տպագրելով ձեր թերթերից մէկի մէջ։

Օրիորդներ. Մարիամ Գրիգորեանց 1 ր., Սառա Սամուէլեանց 1 ր., Զանազան Յարութիւնեանց 1 ր., Աննա Յարութիւնեանց 40 կ., Շուշանիկ Տէր-Պօղոսեանց 40 կ., Բագիւմ Դանիէլեանց 40 կ., Թագուհի Զաքարեանց 30 կ., Վառվառէ Շահբաղեանց 25 կ., Աննա Մակեդոնեանց 20 կ., Եղիսաբէթ Դանիէլեանց 20 կ., Ծաղիկ Քոչարեանց 10 կ., Թագուհի Սափարեանց 10 կ., Սոփիա Շահնազարեանց 5 կ., Թագուհի Մալայեանց 5 կ., Վարդի Աթանեսեանց 5 կ., Թագուհի Խասբաբեանց 5 կ., Թագուհի Խաչատրեանց 5 կ., Խանում Բէջանեանց 5 կ։ Աշակերտներ. Արսէն Ամիրզադեանց 70 կ., Արտաշէս Ամիրզադեանց 30 կ., Սիմէօն Բաբաջանեանց 30 կ., Վահան Տէր-Պողոսեանց 20 կ., Եղիշէ Միրզաբէկեանց 20 կ., Պատուական Տէր-Օհանեանց 20 կ., Թադէոս Երեւանցեանց 20 կ., Մարտիրոս Ղազարեանց 20 կ., Արշակ Մանուչարեանց 25 կ., Նիկողայոս Մանուչարեանց 25 կ., Աւետիս Մանուչարեանց 25 կ., Վասիլ Յովսէփեանց 19 կ., Վահան Զախարեանց 18 կ., Նիկողայոս Զախարեանց 17 կ., Ստեփան Գէորգեանց 15 կ., Աղասի Մախճանեանց 15 կ., Գէորգ Տէր-Զաքարեանց 15 կ., Ալէքսան Գէորգեանց 10 կ., Սարգիս Յովհաննէսեանց 10 կ., Աստուածատուր Աւագեանց 5 կ., Սիմոն Խաչատրեանց 5 կ., Խաչատուր Խաչատրեանց 5 կ., Համբարձում Ղալթաղեանց 5 կ., Թադէոս Գրիգորեանց 5 կ., Յոնան Դաւթեանց 5 կ., Պետրոս Ստեփանեանց 5 կ., Աբգար Սափարեանց 5 կ., Աւագ Յարութիւնեանց 5 կ., Սեդրակ Շահնազարեանց 4 կ., Գրիգոր Հայրապետեանց 5 կ., Առստամ Շաղբաղեանց 4 կ., Ղուկաս Յովհաննէսեանց 10 կ., Մարտիրոս Խաչալեանց 5 կ., Պողոս Յարութիւնեանց 5 կ., Մարգարայ Մնացականեանց 10 կ., Դաւիթ Յարութիւնեանց 10 կ., Պողոս Յարութիւնեանց 10 կ., Գէորգ Ղիչեանց 15 կ., Յարութիւն Աղաջանեանց 10 կ., Եղիշէ Տէր-Ներսէսեանց 10 կ., Լևոն Սոփիեանց 4 կ., Մելիք-Մարտիրոսեանց 5 կ., Արսէն Իշխանեանց 5 կ., Յարութիւն Բենեթեանց 10 կ., Արշակ Աւագեանց 5 կ., Ամիրջան Բինեթեանց 10 կ., Գէորգ Ղալթաղեանց 5 կ., Գէորգ Աղաջանեանց 5 կ., Գէորգ Ահարոնեանց 5 կ., Արշակ Եկանեանց 5 կ., Աւետիս Աւետիսեանց 10 կ., Գրիգոր Քրօղլեանց 10 կ., Գէորգ Դաղաչեանց 10 կ., Լևոն Սոնինկեանց 10 կ., Սարգիս Գասպարեանց 5 կ., Եղիշէ Գասպարեանց 10 կ., Ենոք Գրիգորեանց 5 կ., Պողոս Տէր-Պողոսեանց 5 կ., Աբրահամ Սէյրանեանց 5 կ., Յովհաննէսեանց Մարտիրոս 3 կ., Աբգար Մըկրտիչեանց 3 կ., Ալէքսան Քրօղլեանց 3 կ., Գալուստ Թասալեանց 3 կ., Գէորգ Դիւլբասարեանց 3 կ., Մկրտիչ Մալիանց 3 կ., Ռուբէն Յովսէփեանց 3 կ., Միքայէլ Ներսէսեանց 3 կ., Մկրտիչ Յովսէփեանց 3 կ., Առաքել Ասրիեանց 3 ր., Ընդամենը 13 ռուբլի։

Պ. Տէր-Օհանեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խնդրում ենք «Մշակի» այն բոլոր բաժանորդներին, որոնք մինչև այժմ իրանց այս տարվայ բաժանորդագինը չեն վճարել, շուտով հասցնել խմբագրութեանը իրանց վրա մնացած պարտքը։ Այն անձինք, որոնք փոխում են իրանց աղրէսները, պէտք է յայտնեն խմբագրութեանը, թէ ինչ քաղաքից ինչ քաղաք են տեղափոխվում, և աղրէսը փոխելու համար պէտք է ուղարկեն խմբագրութեանը երկու եօթ կոպէկանոց մարկա։

—

Կիրակի, մայիսի 24-ին, Հալաբարի Մարիամեան օրիորդաց ուսումնարանի վարչութիւնը կատարեց ուսումնարանի տարեդարձը և հաշուետուութեան հանդէսը։ Աշակերտուհիները (թւով մօտ 65) պատարագը լսելուց յետոյ, կարգով կանգնած եկան ուսումնարան իրանց ուսուցիչների հետ։ Ուսումնարանի դահլիճը զարդարված էր աշակերտուհիների գեղեցիկ ձեռագործներով և ուր դրած էր մի ամբիոն։ Ժողովուրդ առհասարակ շատ քիչ էր եկել, չը նայելով որ վարչութիւնը չատերին էր հրաւիրել։ Վարչութեան անդամ պ. Կ. Թեմուրազեանցը բարձրացաւ ամբիոն և որպէս ներկայացուցիչ ուսումնարանի խօսեց Մարիամեան ուսումնարանի ուսումնական դրութեան և կրթութեան նշանակութեան մասին, մանաւանդ Հալաբարի պէս հայաբնակ քաղաքամասում, ուր ոչ մէկ ուսումնարան նիւթականապէս ապահովված չէ։ Պ. Թեմուրազեանցի ճառից մենք իմացանք, որ մի քանի եռանդոտ երիտասարդներ ամենայն ջանք գործ են դրել ուսումնարանի թէ նիւթական և թէ ուսումնական դրութիւնը բարելաւացնել և որ, պարոնի կարծիքով, նրանք մասամբ հասել են իրանց նպատակին։ Պարոնի ճառից յետոյ աշակերտուհիները ներդաշնակ կերպով երգեցին ազգային երգեր, որից յետոյ բարձրացաւ ամբիոն հայր-դանձապահը։ Ուսումնարանի նիւթական դրութեան նկարագրից և տէր հօր ներկայացրած հաշուից իմացանք, որ ուսումնարանի վարչութիւնը խնայողաբար ծախսեր անելով, և ծախսը մուտքից դուրս գալով, այնու ամենայնիւ ուսումնարանը պարտական է մնում 5 ռուբլ։ Վերջը խօսեց թեմական տեսուչ պ. Բարխուդարեանցը, որը ջերմ խօսքերով խրախուսելով ուսումնարանի գործունեայ և եռանդոտ ուսուցիչներին, հրաւիրեց հասարակութեանը ներկայ գտնվել ուսումնարանի հարցաքննութիւններին, և սրանով վերջացաւ հանդէսը։ Ապա սկսվեց աշակերտուհիների ձեռագործների վիճակախաղը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՈՒՍԻՆԵԱՆՔ

Թայմզ լրագրին Փարիզի թղթակիցն հետեւեալ հեռագիրը կը քաշէ մայիս 8 թւով.

«Սէնի քաղաքային դատարանն յանձն չառաւ որոշում մը տալ Լուսինեան իշխանի տիտղոսին հակառակ պահանջողաց միջև։ Մէկ կողմը կը տեսնուի Գեր. Խորէն Նարպէյ, Արքեպիսկոպոս Պէշիկթաշի Ի Թուրքիա, հանդերձ իւր երկու եղբայրներով, Նուզուֆ և Գուիտոն իշխանազունք, որոնց երկուքն ալ ի Փարիզ հաստատեալ են, և միւս կողմէն հինգ օրբեր կը գտնուին, որոց հայրը Միլան քաղաքը հիւանդանոցի մը մէջ մեռած է, և պահապանին դատ բացած է, Լուսինեան տիտղոսին մենաշնորհն անոնց ապահովելու համար։ Ամբաստանողաց խօսքին նայելով, Լևոն իշխանն, որ 1393-ին Սէն Տրնի թաղուած Լևոն Զ. Լուսինեան թագաւորին ուղղակի սերունդն է, 1821-ին Հայաստանի մէջ ծնած էր, և 1846-ին ապստամբաց կողմանէ Հայաստանի թագաւոր հռչակուած։ Երբ ապստամբութիւնն անյաջող եւաւ, ինք երկրէն աքսորուեցաւ, և յԵւրոպա թափառելէ յետոյ, 1859-ին մեռաւ վեց զաւակ թողլով. իսկ Գեր. Խորէն Արքեպիսկոպոսին հայրը պաղատացի վաճառական մ'էր։ Միւս կողմէն ամբաստանեալք կը պնդէին թէ ինքնակոչ Լևոն իշխանը բաղդախնդիր մ'է, և իւր տիտղոսը շոշափելի խարդախութիւն մը, մինչդեռ Արքեպիսկոպոսը Բնդրսպուրկ բնակող Ծերունի Լուսինեան իշխանի մը ճանչած եղբօրորդին է։ Այս Ծերունի Լուսինեանը ճանաչուած էր ռուսական կառավարութենէն, որոյ բանակին մէջ կը ծառայէր Նիքոլա կայսեր ժամանակ։ Իւր հայրն Ամերի, որ Թուրքիա մեռած է, իսլամական մոլեռանդութեան պատճառաւ ստիպուած էր իւր Լուսինեան անունը Նարի փոխել. այս երկու բառերն ալ լոյս կը նշանակեն. բայց ինք Կիպրոսի և Երուսաղէմի թագաւորաց ուղղակի սերունդն էր։

«Գաղղիական դատարանն, իւր առջև այս իրարու հակառակ պահանջումներն ունենալով, յայտարարեց թէ յանձն չառնուր օտար տիտղոսներու քննութեան ու խուզարկութեան ձեռնարկել, ըստ որում Գաղղիական տեսանք Գաղղիացւոց միջև ծագած անհամաձայնութիւնները կարգադրելու պաշտօն ունին, և թէպէտ կրնան վճիռ մը տալ իրենց միջամտութիւնը խնդրող օտարազգեաց վէճերուն վրայ, այսու ամենայնիւ պարտաւոր չեն օտար երկիրներու օրինաց հետ գործ ունենալ. երբ երկիւղ կայ թէ Գաղղիական դատարանաց վճիռներուն արժանապատուութեան վնաս տուող սխալներ կրնան ծագիլ։»

(Մասիս)

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի ընկերութեան հայերէն գրքերի հրատարակութեան Վարչութիւնը պատիւ ունի յայտնել, որ արդէն դուրս եկան մամուլի տակից և ծախվում են Թիֆլիսի բոլոր գրավաճառների մօտ ընկերութեան տպագրութիւնները։

№ 4 ԲԻՋԷՐ-ՍՏՕՈՒ. ԹՈՎՄԱՍ ԵՂԲՕՐ ՏՆԱԿԸ, փոխ. երեխաների համար Պալմեր, թարգ. օր. Ն. Տէր-Մարկոսեանի։ Պատկերազարդ և կազմած—60 կ.։

№ 5 ՄՈՐԵՄ ԵՒ ՆՈՐԱՆ ԶՆԶԵԼՈՒ ՀՆԱՐՆԵՐԸ. աշխ. Տէր-Բարսեղեանցի։ Գինն է 10 կոպէկ։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հեռաւոր հասցէով Въ Тифлисъ, Тифлисское Общество изданія армянскихъ книгъ.

ՄԱՍՆԱՒՈՐ ՄԵԾ ԱՃՈՒՐԴ

Յայտնվում է Թիֆլիսի հասարակութեանը, որ մեծ քանակութեամբ արտասահմանեան գինիներ են ստացվել Դեպրէի, Ելիսէվի և ուրիշների գինու պահեստներից, Պոպովի և Շարիտերի օղի, Ֆրանսիական լիկեօրներ և ուտեստներ։ Մտադրութիւն կար այդ ապրանքների առևտուր սկսել Թիֆլիսի մէջ, բայց որովհետև ճանապարհների կապված լինելու պատճառով այդ ապրանքները ուշացան, նշանակվում է մանաւոր աճուրդ Թամամշեվի քարվանսարայի դալերէյում, մայիսի 21-ից մինչև յունիսի 5-ը ամենայն օր առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 7 ժամը, աճուրդի ժամանակ փոքր քանակութեամբ էլ կը ծախվի, այսինքն 10 մինչև 20 շիշ։ Ցոյս ունենք, որ այդպիսի հազուագիւտ դէպքը անուշադիր չի մնայ։

1—2

ՓՆՏՌՈՒՄ ԵՆ ՄԻ ՀԱՇՈՒԱՊԱՀ, որ լաւ իմանայ ՌՈՒՍԱՅ և ՏԵՂԱԿԱՆ լեզուները, Սալի-Օղլի ծխախոտի ԳՈՐԾԱՐԱՆԻ համար։ Բերուսովկայա փողոց, Ճեշմարիտօվի տուն։

3—3

Դուրս եկաւ մամուլի տակից և ծախվում է «Կենտրոնական» և պ. Զ. Գրիգորեանցի «Կովկասեան» գրավաճառանոցներում և Թարգմանչի մօտ Ներսիսեան դպրոցում՝ համաշխարհական ողբերգակ Վիլիամ Շեկսպիրի՝

Օթէլլո

Վենետիկի մաւր, ողբերգութիւն հինգ արարուածով Շեկսպիրի կենսագրութեամբ։ III թարգ. Ստեփանոսի Սուլխանեանց. գինն է 60 կոպ.։

3—5

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ ծախվում են օպէոգրաֆիական պատկերներ 20% զեղչումով. վերարկուներ 6—10 ր., խոզանակներ պատուիրված են Շեֆիլդի մէջ առանձնապէս անգլիական խանութի համար, ամենալաւ ածելիներ, արկղիկով 4 ր., Շեֆիլդի դանակներ 3—20 ր. դիւժինը, բրիտանական մետալի թէյամաններ 30 կ.,—3 ր., ցիտրատամաղնեղիա, թիւրքական շերբէթ և ծարաւը յագեցնող նիւթ 70 կ., ամենալաւ պորտվէյն և խերես 1 ր. 40 կ. շիշը, շամպայն 3 ր. շիշը։

2—20

Եղբ. Ս. ԵՒ Ա. ԴԱՒԹԵԱՆՆԵՐԻ ՏՊԱՐԱՆՈՒՄ, որ գտնվում է Սապէօրնայա փողոցում, պ. ԿԱՐԱՏԻՆՍԿՈՒ տանը, № 23 ընդունվում են ամեն տեսակ ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ տպագրութիւն աւելի էժան գներով, քան թէ ՈՒՐԻՇ ՏՊԱՐԱՆՆԵՐՈՒՄ։

2—2 (2)

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Աշխարհին յայտնի ՄԱԶԵՐԻՆ նախկին ԳՈՑՆ տուող **ՄԱԿ-ՄԱՍՏԵՐ** ծախվում է անգլիական խանութում 2 ռուբլով։

2—100

Համեմատեցէք անգլիական խանութի թէյը գնով 1 ր. 10 կ., 1 ր. 20 կ., 1 ր. 40 կ., 1 ր. 60 կ., 1 ր. 80 կ. ֆունտի համար այն թէյերի հետ, որոնք ուրիշ խանութներում 30%-ով թանգ են ծախվում և այդ խանութի ֆունտը 2 ռուբլիանոց թէյը, ուրիշ տեղ 4 ր. ծախվող թէյի հետ։

2—100

ՀԱԴՈՒՍՏՆԵՐ երեխաների 4 ր., տղամարդկերանց 9—20 ր., ամբողջ հագուստը, պիջակ 5 ր., ՈՐՏԵՂ Է ԾԱԽՎՈՒՄ. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ։ Բամազէյ, պարուսին, տրիկո, դրապ, փոսաի թուղթ, թաւիշ կարասիքի և կառքերի համար, կալենկոր և այլն 25% ուրիշ տեղերից էժան։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ համեղ մուրաբաներ, կոնֆետներ հազի դէմ, պանիր, մաղնեզիա, ամաններ, կարբոլեան փոշի, սապոն, պարսկական փոշի և այլն։ Այս բոլորը և ուրիշ շատ ապրանքներ կարելի է գտնել ԱՄԵՆԱԷԺԱՆ գներով ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ։

2—20

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ հանդէսի ներկայ ամի երկրորդ տարն կը հրատարակուի յառաջիկայ յուլիս ամսոյ սկզբում և կը բովանդակէ քար. մէջ, Ի միջի այլոց նաև Հ. Մաղաքիա Ծ. վարդապետի Օրմանեան, Գաբրիէլ արքեպիսկոպոսի Այվազեան, Միքայէլի Մինասարեանց և այլոց պատկերներն։ Բաժանորդութիւնն շարունակվում է։ Տարեկան գինն է 2 ռուբլի արծ. կանխիկ վճարելի։

Հրատարակիչ Զարմայր Մսերեանց

2—10

ՄԱՐԻԱՄԵԱՆ-ՅՈՎՆԱՆՆԱՆ օրիորդաց ուսումնարանում ՖՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ լինելու են ՀԵՏԵՒԵԱԼ ԿԱՐԳՈՎ.

Մայիսի 19 և 20 կրօն և Սրբազան պատմութիւն.

« 22 և 23 հայոց լեզու.

« 26 և 27 ռուսաց լեզու.

« 28 թուաբանութիւն

« 30 և 31 Աշխարհագրութիւն, պատմութիւն և բնական գիտութիւններ։

4—5

Дозволено Цензурою 28 Мая 1880 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона